«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0015, Սուրբ Գ. Լուսավորիչ 9
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Հեռ.՝ +374 (11) 400 400
Ֆաքս՝ +374 (11) 400 401
էլ. փոստ՝ info@ucom.am
www.ucom.am

Հարգելի Գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ «Յուքոմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն/Պատվիրատու) հրավիրում է բոլոր իրավասու կազմակերպություններին ներկայացնել առաջարկներ հետևյալ ծառայության մատուցման համար. իրականացնել Ընկերության կողմից նշված օբյեկտում՝ **"Կենտրոն" տվյալների կենտրոնի արտակարգ սառեցման համակարգի կառուցումը,** համաձայն ներկայացված և պահանջվող տեխնիկական բնութագրերի:

1. Ընդհանուր տեղեկություններ

Ծառայության մատուցման հայտ ներկայացնող կազմակերպությունը (այսուհետ՝ «Հայտատու») կնքվող պայմանագրի շրջանակներում կստանձնի պարտավորություն կառուցել "Կենտրոն" տվյալների կենտրոնի արտակարգ սառեցման համակարգը, որի համապատասխան պահանջվող տեխնիկական բնութագրերը ներկայացված են մրցույթի հրավերին կից: Ծառայության մատուցումը, կազմակերպումը և համակարգի տեղադրումը իրականացվելու է Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված և հաստատված կարգով ու պայմաններով, Օբյեկտում սահմանված՝ Պատվիրատուի ներօբյեկտային և ներքին կանոնակարգերին համապատասխան: Աշխատանքների մանրամասները ներկայացված են մրցույթի հրավերին կից փաստաթղթում՝ կատարման ենթակա աշխատանքների բնութագրության մեջ:

2. Առաջարկի ներկայացումը

Հայտատուներն իրենց առաջարկը պետք է ներկայացնեն ոչ ուշ, քան 2021թ. Օգոստոսի 24-ը, մինչև աշխատանքային օրվա ավարտը՝ ուղարկելով այն ստորև նշված անձանց էլեկտրոնային հասցեներին:

Առաջարկը պետք է ներառի՝

ա) Հայտատուի տվյալները (ընկերության անվանում, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատու անձ, կոնտակտային տվյալներ),

բ) Հայտատու կազմակերպության պորտֆոլիոն (նշել վերջին 5 տարիների ընթացքում տվյալ բնութագրությամբ կատարված մի քանի աշխատանքներ և համապատասխան ընկերությունների անվանումները),

գ) Ծառայության մատուցման գնային առաջարկը (ավելացված արժեքի հարկ վճարող հան-դիսանալու դեպքում՝ դրա վերաբերյալ նշումով) հարկավոր է ներկայացնել ըստ բացվածքի, (առանձին՝ ըստ նյութական արժեքների և ըստ աշխատանքների),

դ) Ծառայության դիմաց վճարման ակնկալվող պայմանները,

ե) Ծառայության մատուցման առնչվող այլ տեղեկություններ և/կամ մեկնաբանություններ,

զ) Առաջարկի վավերականության ժամկետը (առնվազն 45 օր):

3. Կոնտակտային տվյալներ

5. Առաջարկների, հարցերի, տեխնիկական քննարկումների համար կարող եք կապ հաստատել ստորև նշված անձանց հետ.

Գնումների մասնագետ՝ Արմեն Միքայելյան՝ armen.mikayelyan@ucom.am +374 95 988 719

ԳՄԲ ղեկավար՝ Հովակ Պոդոսյան՝ hovak.podosyan@ucom.am +374 44 444 340

Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը մրցույթի տևողության ընթացքում պատրաստ է կազմակերպել աշխատանքային քննարկումներ՝ Ծառայության մատուցման ու առաջարկների ներկայացմանն առնչվող հարցերի պարզաբանման նպատակով: